

Մեսրոպին՝ տառից գիւտին առթիւ<sup>1</sup>, վրիժառու Յովին. կարափետին<sup>2</sup>, և ուրիշներ. և անոնց որ եղան Նշխարաց յայտնութեանց համար, ինչպէս Ներսեսի<sup>3</sup>, Թագէսի, Բայրթողոմէսի և այլն. Աստուած մեր նախնեաց հետ յաճախսակի այդ անսովոր եղանակով հաջորդակցեր է. արդեօց զանոնք շատ սիրելուն, թէ իւր կամքն անոնց աւելի դիւրնկալ ընելու նպատակով, չեմ զիտեր:


Մեր պարագային՝ տեսիլն աւելի քան չի ցուն գիշերի<sup>4</sup> արեւու մէջ պատահած կը տեսնուի: Գրողը, որ կարծեցեալ կիրակոս տեսանողն յետոյ կը ներկայանայ ժամանակաւ, իւր առջն դրեր է ծանօթ Վկայարանորինը, և զայն իրեն կաղապար առեր: Տեսեր է որ հոն ժայռը կը պատոփ և իւր մէջ կ'ամփոփէ առացելոյն մարմինը. հոռ ալ հակառակ շարժմամբ մը ճեղքուիլ կու տայ ժայռին և ի տես դնել նշխարները<sup>5</sup>: Հոն կը վարեն «քիեռս հրացեալ ընդ ուսն» Սամուելի, և ոմանց՝ «հրացեալ երկաթով զսուռնսն ծակէին»: և հոն՝ նշյապէ «միօյն ընդ ուսն հարեալ երկաթի ընեւու և ի նմին կային ընեւոյն, և միատևն ընդ լսուռնսն ծակեալ»: կայ նաև զուարձալին, առաքելոյն ու Սանդուտոյ նշխարները յես բացման երբ իրարու մօս կը գրուին, յանկարծակի «թոռւցեալ առ միմեանս հանգչէին»:, ի յուշ իրենց հին մտերմութեան:

Կեղծ է ուրեմն նշխարաց յայտնութիւնն ու տեսիլդ, զոր ես կը զետեղեմ միւսերուն ցով, և կը կրկնեմ, թէ կարծեցեալ Թագէի գերեզմանը յամենայն դէպս անյայտ էր մինչեւ այդ ժամանակ: Տեսւեան հեղինակը միանգամայն կը հաստատէ թէ առաքելոյն նշխարաց վրայ «զիր ոչ էր», մինչ անոր աշակերտաց իսրայելի ու Զաքարիայ վրայ կար, կ'ուէ ինքը<sup>6</sup>: Այս պատճառաւ մեց ալ պէտք ունինք թա-

դէսոփ ցուցամատին, որպէս զի կարենանց հաւասար եղեսացոց կեղակարծ առաքելոյն կարծուած անզիր և անապացոյց նշխարաց հայ հողին վրայ գտնուելուն. վասն զի մեր սովորական միջոցները՝ պատմութիւն և ցննադատութիւն՝ չեն զօրեր հոգ, մանաւանդ թէ կ'ընդվզին: ինչպէս կ'ըմրոստանան նաև այն տեղեւ կորթեան դէմ՝ զոր խորենացին լսեր է ծերունիէ մը, թէ լուսաւորչին յդութիւնը պատահէր է թաղէսոփ այն գարերուն գեռ անյայտ գերեզմանին քով<sup>7</sup>: Մարգարէական հոգւով միայն կարելի էր այդ կրկին գաղանիցները (յուութիւն ու գերեզման) իմանալ և զուգել իրարու: Այդ ծերացած մտքերն ինչներ կ'երեակայէին:

(Եարայարելի)

Հ. Վ. Հաջոյան



### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՁՆԿԱՑԻՈՆ ՀԱԽԱՔՈՒՄՆ  
ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ ԳԵՐԱԿԱՆԻՒՆ

Զեռագիրս կը կրէ զանացս Զեռագրացակին մէջ թիւ 957. զետեղուած է թ. Գ զարան, և իր վրան զրուած է Յովհաննու Երզնկացւյ Հաւաքումն ՄԵԿՆՈՎԹԵԱՆՑ ԳԵՐԱԿԱՆԻՆ՝ Խոտրգիր թիւ

Ունի ձեռագիրս 305 թուղթեր, որոցմէն Ֆնը պարզ և անզիր են: իր մեծութիւնն է երկայնք 15.50 գմ. լայնք 10 գմ.: Գրութիւնը միասիւն է, զիրն է՝ Խոտրագիր, նիւթը՝ թուղթ, կազմն է տախտակ կաշեպատ՝ գոցելու մասսվ: Կողից երկու արտաքին երեսները զարդարուած են իրուրացանդ գեղեցիկ ճաշակաւոր զարգերով: Գրչին նկատմամբ (էջ 471) կ'ըսէ սեղ մը. «աղաչեմ յիշել զսակաւ աշխատուի ի սմա. զիոնկանէս վարդապետ, ընդ նմին և. . . զգող սորին Սիմէոն լոկ անուն դպիր»: Խիկ (էջ 609) վերջ կոյս ձեռագիրս կը կարդանց. «Ո՞ն ո՞ն, աղաչեմ ողովութիւն վիրիս յիշեաց զգծագրող զըրիս զՄետփանուս երեցս»: Գրութեան թու-

1. Խորեն. Գ. 4: — 2. Մատեղ. 11: — 3. Սոսչեց. ի. 47: — 4. Անդ. լ. 57, 92: — 5. Անդ. 98-99, 98: — 6. Անդ. 94: — 7. Անդ. 90: — 8. Խորեն. Բ. 4:

կան անծանօթ է: Միայն կողքին ներսի կողմը կը գտննեց ձեռագրիս Ս. Ղազար մտնելուն թուականն. «Երեր Վ. Հ. Փիւ լիպառն թերճ. Առան 1825»:

Կը սկսի «Յաղագս քերականութեան», 1-66: Յետոյ ունի. «ի ինդրոյ Տեառն Յակորայ կաթուղիկոսի և վարդապետաց մերոց եղբարց արարեալ հաւաքում քերականին մեկնութեանն Յոնանիսի իզգը»: Կացոյ ուսումնական ի գրոց. 67-195: «Դարձեալ կը կին մեկնութիւն վերծանութեան զիխոցս իրեւ ի մոյ դէմս հառցին...» 195-581: Մեկնութիւններէս վերջ կու զայ Յիշատակարան գրոց (581-599), որը թէ և մասամբ լրյա տեսնուած է, պայց կարեւոր պատմական դէպրէր գտնուելուն ամրոջապէս կ'արժէ ծանօթացնել բանասիրաց, միայն ի բաց հանելով իմաստասիրական ասացուածները և է հետեւելու:

«(Մ)եծացանչ և զարմանահրաշ բանաւոր կենդանիս այս մարդ մի և նոյն կազմած հետակի աւրորոշմամբ զանազանի. (Նու կը զնէ մարմույ և հոգոյ կատարելութիւնը մարգաւուն և կը յաւելու). «Ալդ վերնական աստուածային բարեացն ի կերպ կազմածին ատուզապէս պատկերագրաւղն բարեկաշուտթեան և իմաստութեան տիրապէս տարփաւորն՝ աստուածանութեան թագաւորն Հայոց Հեթում, որդի Լէոնի քարեզաշչոր, որդույ իմաստուն արքային Հեթում հաւը և մօր Զապէլի որբոյ թագունոյ դատեր առաջին պահակաւորին Լէոնի, որդույ Սկեփաննեայ, որդույ Լէոնի: Որդույ կոստանդնօսյայ, որդույ Ռորենի մնձի իշխանին, յերկուց թագաւորական ցեղիցն սերեալ զարմի, ի բարգաւառունոյն և յԱրծունոյն: Յայտուիկ թագընկալեաց և յիշխանաց բարձրագահից բողոք բարեկաշտութեան բուսական և ծաղկի գարնայնոյ ի ձմեռնացեալ ժամանակին երևեալ, սաղարթաւոր և բազմութեան արքայական տնկոյն պտուղ բաղըրածաշակ ի համս և ի հոսս հասեալ, հայկական սեփս և արամեանս ազին, բեկելոց և խոցութելոց

յայլակեզու ազանց՝ սպեզանի և զեղ զիւրացուցիչ, բարեզարդութեան կարգաց և կրօնից և եկեղեցեաց և մանկանց նորին դասաւորութեան պայծառացուցիչ, վարժ աստուածային գրոց սրբոց, և պատուօղ ուսումնականաց և զիտութեանց հմտականաց, բարեգութ առ ամեննեսեան և ինամածու, յորմէ և ես նուաստ Յոհաննէս եղկայեցի, բազում ինամ սրբոյ և առասութիւն, զիոյ վայելեցի: Եւ զի յոյժ գրասէր և ուսումնասէր ունէր բարս՝ բարեմիտ թագաւորն, որ և ի դառն ժամանակիս, յորում աշխարհ ամենայն իրբեկ զծով անզընդական խորովք խռովեալ և ամրոխեալ ծփէր, և աւազանման որդին Աբրահամու՝ անօրէն ազգն իսմայելի և աղախնածին նրդիցն Հագարու՝ ծանրացեալ ի վայր քարշեալ ծածկէին զամ(տ)եղացեալ որդին հաւը հաւատոյ, վասն պայծառ լրացոյ առաջինութեան ի նոսանուազելոյ, և բռնացեալ նեղէին մաշել սրով և գերութեամբ: Խակ բարենէր թագաւորն Հեթում իրբեկ զամոդ նշանաւ լուսնջով վայէէր և զաղքատութիւն եկեղեցույ մատը զարգարեալ ծածկէր: Եւ ոչ զադարէր ի զիրս ստանալոյ և յեկեղեցույ զանձու յաւելումն առնելոյն վասն որոյ և ես նուաստ Յոհաննէս եղնկայեցի, բիկր բարեաց պարտականն խոնեմամիտ և իմաստութեան պատուղ արքայի, ընծայեցի զփորք զայս գրկունց, որ կոչի բերական, առ ի գերել և որբէլ, պարգէլ և զտել զամնայն բանախօսութիւն և իրագործութիւն:

Վեցեակ կատարե(լ)աթիւ սորին մասմբըն կատարեկագործել զրանաւորութիւն ի վեցերեկի աւուր ստեղծեալ մարդոյն: Զվերծանութիւնն առուգանութեանցն ընթեռնուէ արուեստիւ: Զրուցաւրութիւնն իմաստպէս և ոչ ամենականացն սովորութեամբ: Լեզուաց գաւառաց և պատութեանց, ազանց: Համաստ համեղախօսութեամբ համեմատութեանցն լրծականք զբայիցն, և ուղել մէտս կշռոց Զդաստումն քննութեան առնել ի ատզիցն շափողութիւն և ի հառիցն ուղղամիտ հա-

բազատութիւնն։ Տեղեկանալ և տառիցն բանազանութեան և բառիցն ի բանան շխանդութեանն։ Վրահասու լինել վանդիցն և փաղատութեանցն, փոխայեղութեանց, բանալի ունել բանին զութեակ մասունացերդութեան։ Այնուզ զիմաստու անուանցն հասարակաց և մասնականաց և ընդ նորումը անկեալ տեսակացն և ի խոնարհմունա բանիցն յաւելոյ և շաղկապելոյ և այլոց մասանց արուեստի անդամոց մարմնոյ։

Այդ ի յայսմ ժամանակի, որ էր թուականին հայկազեան տումարի Զիթ, զրեցաւ զրկունքու։ Որ և յայսորիկ աւուրս ժամանակաց բազում եղեւ աղէտո ողորմանաց և զգայական սուր և (պարապ) դողական ցրիստոնէից ազգի անօրէն սուրտանացն եցիպոսի, զորս պարտ է յիշել կարճառոտ բանիւ։ Զի Զլի Թուականին, Այլուտանն եցիպոսի Ալֆի անուն առ զծրապօխս զերեց պարս(պ)եան ամրութեամբ պատեալն զեղեցկաչէն բաղաց, անցեալ զօրաւըն ընդ մուտս ծովուն յաւարի առեալ զանչափ զանձնն, որ ամբարեալ կայր առ փարթամաշեալ բնակիչն, աւերեալ յատակեցին զպարիսպ քազարբն, և քակեցին գհրաշազարդ եկեղեցին։ Խոկ Զի թուին որդին։ Ալֆէ Մէկից Աշրափ անուն խակամիտ և գաղանաբարու՝ առ զմեծահռչակ և բազմամբու քաղաքն զլիցայ, զոր ունէին ազգ փրերացն Ծուն զամրլուն և Ասպեթալին, անարի թոյլ գտեալ ազգն արինական առաջի անօրինացն։ Մատոնեցաւ, բաղացն ի պաշարումն և առաւ ևս պատեցան սրոյ և զերութեամբ, զի սուրբ անօրինացն զաւազանածին տունկուրն բանաւոր թաւթափէին զզլուիսն ի մարմնոց, իրու գտերես ծառոց և այլըն վարեցան ի զերութիւն, իրը զձագս հաւուց ի բունոյ բնակութեանց իւրեանց, և ազնուականքն և զատածինքն ճոխըն և փառաւորն զնացին ի ստրկութիւն, և մնաց քաղաքն բազմորդի իրու զմայր սևաւ(զ)գեստ ի վերայ մանկանցն իւրոց։

Խոկ ի թուականին Զիթ յաւելաւ ահ

և երկեղ, դողումն և սասանութիւն յերկիրն Հայոց, ի կիլիկիայ, զի վիշա(պա) զուուն այն որ առ զլիքայ, զիմեաց ի զարանէ իւրմէ անազին շնչմամբ և զդորուելով անհուն զօրուց հեծելաւը և հետեակօց ըստ յերեմեայի զուժմանն բօթի ել առիւն ի մորոյ իւրմէ սատակել զազգութաղաց և ել ի տեղուցէ իւրմէ առնել զերկիր, աւերակ, և բաղացը բակտերացին առ ի չգոյէ բնակչաց ի նոսայ, որոյ ասէր ի վերայ այլորիկ ցրձազգած եղերուց, կոծեցարուք, ճիշ բարձէց, զի ոչ բարձաւ սրտմութիւն բարկութեան իմոյ ի ձնչի Ցայսմանէ սարսեալ յերկիրն կիլիկեցւոյ՝ զաղթեցան ի (լ)երինս և յամրոցս բերգիցն։ Խոկ նա զիմեալ զնաց ի վերայ հայրապետական աթոռոյն Հայոց ի Հռոմէկայն, և պատեալ պաշարեաց զնա բազմածեռն պատերազմողը, բարձրածից անաւը ծանը քարանաց, բարահատ արուեստանօց և նաղմափոր զարանամտաւը և առ զաստուածաշէն և զգեղեցկապիր ամրոցն վասն մեղաց մեր յանախութեանցն և բարեացն նուազութեանց, Գիրեաց և զսուրը հայրապետն մեր զկաթուղիկոսն Ցէր Ստեփանոս, և եպիսկոպոսաւը և ցահանայաւը և անթիւ ցրիսառնիւց։ Որ համեմատէր ողրոց և աւերմանն Սիոնի և կրուսազմի, զի բահանայց և արց փառաւորց անկան ի սուր և կանայց պատուականաց անարգեցան։ Աստուածային կտակարանը յանօրինաց ձեռաւց յափշտակեցան։ Առաքելական և մարտիրոսական նշխարը սրբոց խորտակեցան։ Զարդն ոսկւոյ և մարգարատեաց և ականց պատուականաց, որ ի վերայ սրբութեանց կողոպատեցան։ Ալին առաքելապատիւ սուրբ Լուսաւորչին մերոյ յերկիրն այլազգաց զերեցաւ, որ ողրոմելի էր քան զգերութիւն տապանակին ի հնումն։ Եւ եղեւ այս ամենայն Հայաստանեայց ողրոյ և յարտասու, ի հեծեծումն և ի հառաջումն Յայսրան ամս որոյ այս ամենայն զայր ի վերայ ցրիստոնէից, ի պատուհան մերոցն յանցանացն և անդառանալի մեղացն։ Յար և անհատ եկաւորու-

թեան գային դեսպանըն ի մեծամիտ և  
յամբարտաւան սովորանէն առ ըրիստո-  
սասէր և առաջինազարդ թագաւորն մեր,  
սաստիկ սպանացիօց և ծանր հարկապա-  
հանչութեամբ և անթիւ զանծս յուսկոյ և  
արծաթոյ խնդրելով և այլ բազում ըն(...  
...)ից իսկ թագաւորն մեր կայր եր-  
կայնմտութեամբ անշարժ և հաստատուն  
յուսով, ապաւինեալ և յաղօթոն և ի պա-  
ղատանս հաշտարարս և հեղումն արտա-  
սուացր Եւ ըստ յուսոյ մարդասէր թա-  
գաւորին կայաց և մայաց մինչև ի թիւս  
թուականին Զիթի. և վստահնէաց յո-  
դորմութիւնն Աստուծոյ պարզ մինել շի-  
նութիւն աշխարհիս, յուսոյ և սիրոյ թա-  
գաֆարին որ յԱստուած և ի սուրբն նորա:

իսկ Աստուած՝ որ ոչ ամաչեցացանէ զյուսացեալսն իւր ըստ հայցմանն Գաւթիք և երաշխաւորութեան Պաւղոսի, և որպէս փոքրի ի բովս ուկի և արծաթ՝ նոյնպէս ընտրէ զսիրտս Աստուած, ըստ Սողամոնին հայեցեալ ի համբերատար ժութկալութիւնն թագաւորին մերոյ, և ի նեղութիւնս զոր կրէց երկիրս Հայոց ։ Եւ որ ի ձերին ուն ի զսիրտս թագաւորաց որպէս առհանս ջուրց, և ընդ նորին կոյս կամի նայեցուցանել՝ դարձուցանէ զնաւ ։ Եւ որ մինչ չե ցայտ վայր թոյլ ես գտառզարտոյ սուլտանին սրտմտական բարկութեամբ իրքն գնուսանս գեաց զոռալ հեղեղաբար, յարձակմամբ գերել և գերփել, և զազանային ցաւամմմբ զսպառումն սպառնալը ընդ Նարուգոնդորնասայն ի վերայ Երուսաղէմի, զարձոյց զահմանս սրտմտութեան նորա և նայեցոյց խոհականին վարել ընտրութեամբ և զթալ որպէս Կիւրոս առ զերեալսն յերուապէմէ Բարեկոն։ Զի ի նոյն թուիս Ձիթ, ի մուտա յունիս ամսոյ եկին զեսպանց, պատւարց ի սուլտանին, և բերէին օժիտս մեծազին և պատուական զգեստուց, զալաթ և զիւայ անձին թագաւորին և զՄԶ եղբաւը նուրա բերին, և թուզթս երգման զսպառանին և զմեծամմն ամիրայաց նորա, և հաստատեցին դաշինս սիրոյ և խազայութեան ընդ թագաւորն Հեթում, Ալիքին

(ի) նմանէ երդումն հաստատութեան, ընկալան և պատրուճանս զարդուց ամենայն եկեղեցն ի սուլտանէն։ Առացեաց և Ասամիտ թագաւորն՝ մերոց բազում բեփինս արծաթուց, և զանազան կտաւա սուկնկար մետաքսից, և բազմութիւն ձիոյ և ջորոց և այլ իրս նորագիւտամ աղերս և հարկ սուլտանին։ Եւ եղկ այս սիրոյ խաղաղութեան հաստատութիւն, ինդութիւն մեծ յերկրի Հայոց էր և աղերս զթութեան խստուծոյ ի մեզ բարեկրածոյ, յոյժ և հաւատ, և սկը և ոչորմածութիւն թագաւորին։ Զի որպէս զաշոն ջորն Մեռայի բար ըմպելի առողջահամ նոյն խարայէլ, զգառութիւն բարուց Ավլտանին քաղցրացոյց ընդդէմ թագաւորին մերոյ և եկիղեցւոյ Քրիստոն սիթ Արդ որբ ընթեհնուց զայս բան յիշատակի և աւգակի յարուեստական զրոյս իմաստութիւնն՝ յիշես նից բարի յիշմամբ զրաքեպաշտ թագաւորն Հեթում հայցել ի Քրիստոնէ զթողովթիւն մեզաց և խընդ զրել արքայութիւնն, անմահական կենաց, յիշել ընդ նմին և զարասնոնդ և զրաքերարու եղրաբս նորա, զոր անուցան նէր երկիրզի Տեսան և ուսմամբ իմաստութեան և զրարի արմատ ծնաւոյ քահանայութեանն և զաւակացս, զի և դուց զթութեամբ յիշեալ լիշից յամնօրհնեալ յիշումն Աստուծոյ Ամեն, Ամեն։

Երզնկացիին այս յիշատակարանէն  
վերջ գեն հինգ թուղթէ աւելի կայ «Բառաց  
քերականին» Ներքեւ բառեր, ինչպէս վեր-  
անութիւն — ընթերցողութիւն. — Ներ-  
կուու և այլն»

Բազմանմուռ բազմածիր Ալիշան վարդապետ իր զյուկի գործոց Սիստանի մէջ Հեթում թ.ի համար իրը զրուատից առնելով հեղինակին ըստածները՝ կ'օրինակէ բառ առ բառ աննշան տարրեկութեամբ, իսկ զիզնկացին կը կոչէ Մ'եծ հոետոր (Սիստան 548): Ուրիշ տեղ մը (էջ 224) «Նոցին հետևող և արդեօք զերազանցեալ յետին ճարտար մատենազիր մեր՝ Յովկաննէս կընկացի, ուզգերէր երրեմն յար-

բոնիս և ի վանորայս վիճակիս՝ ի բանափրական խնդիրս, և հրաւիրեալ մինչը ի մեծահանդէս տօնս եկեղեցականս և արդունականս արտասանել ճառու զեանս, օրինակ իմն. «Ի խորհուրդ Ենթագան և Մկրտութեան Տեառն, ատացեալ ի թագաւորական քաղաքն ի Սիս» և այլ երրեմ (յամի 1283) «Յաւուրին յորում օրէնցեցան ձիւարը՝ արքայորդիք մեր Հեթում և Թորոս և այլ մանգունց իշխանաց և որց յարցունական սպասաւորացն», բնարան կարգելով զառարելուկանն, «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է» և այլն. Այլշան վարդապետ կը յիշէ հարեանցի կերպով Եզնկացւոյն «Եթշատակարանիս» համար ցանկ ժամանակազրականին մէջ (նոյն էջ 556) 1293 թուականին կը դնէ «Հեթում պատուէ զեռվաննէս Եզնկացի եկեալն ի Սիս. Անդ զրէ սա զյշտառակարան մեկնութեան բերականին և ընծայէ առ Հեթում։

Սրսուանի մէջ չենք գտներ, որ Ալիշան վ. ուսկէ և ո՞ր գրքէն առեր է Հեթումի գովեսար և Մելիք Աշրափի յարձակութերը է այլն, և այս պատճառով բազմահմտաւ անձեր, թերութիւն մը կը գտնեն իւր գրուածոց մէջ զայս, և երբեմ մէջբերութիւնները ոչ հաւատարիմ կը գտնեն: Արդարք իրենց պահանջը մասամբ մը իրենց տեսակէտով կարելի է թերութիւն համարել բայց բանափրաց և զբանիքաց համար ընդհանուր առումով՝ ոչ եթէ թերութիւն է չխնդողելը և չստուերացնելը, այլ մանաւանդ հեշտալի է ընթերցանութեան համար, գիտնալով՝ որ արդէն հմուտ քննադատը ունին այդ վեկայութեանց հաւաքոյթը և պաշարը և աւելորդ է սակաւաներու պատճառաւ ըլլալ անախորժ այլոց։

Ա. Կ.

## ՀԱՅ ՔԺԾԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՒՐՔ Ա. ՊԱԶԱՐՈՒ ՎԱՆՁԻՆ

Ա. Ղազարու Վանձին 62 կտոր Հայ թժշկական ձեռագիրներու մասին կատարած ուսումնասիրութիւններու հրատարակութիւնը, ցանի որ ա՛լ վերջ գտաւ, մեծապէս պարտաւոր կը զգամ զիս իմ խորին չնորհակալութիւններս յայտնել ԲԱԶՄԱՎՀ Հանդիսարանի մեծայարդ իշրմագրական մարմին և մասնաւորապէս՝ խմբագրապետ Հ. Ղենդ Վ. Տյայեանի, որ երեցուկէս տարի շարունակարար, (1923 յունուարէ մինչև 1926 յունիս) հիւրենկալ եղաւ իմ փանարի աշխատութեանն։

Հարկ է օակայն, որ յետագարձ ակնարկով մը դիմեմ պահ: մը այդ հրատարակուածները և անոնց մէջէն ցաղելով դասաւորիմ՝ ժամանակազրական կարգով՝ խել մը թուականներ ու անձեր, որոնց Հայ թժշկական Պատմութեան կարենոր ու նոր էջեր կը յօրինեն. այդ դասաւորումը վերջարանը պիտի ըլլայ Վենեսաբիկեան Հայ թժշկական ուսումնասիրութիւններու։

Նախ և առաջ՝ Գրիգոր Նիւացիի «Գիրք բնուրեան մարդոյ» Կոչուած աշխատութեան ձեռագիր վեց օրինակներէն հաստատապէս կը ճշդուի, թէ այդ գործը Հայերէնի թարգմանած է կ. Պոլսոյ մէջ։

716ին, Առեփաննոս Արևելքի մեծանուն Եպիփանոսը, որ 21 յուլիս, 735ին կը վախճանի եղերական մահուամբ։

990-1020, Ալարերէնէ Հայերէնի կը թարգմանուի այս թժշկարանը, որ թարգան Գագիկ Ա. պատուով ճանչցուած է և որ Ս. Ղազարի ձեռագրատան 1281 թուակամարը կը կրէ (զարակ Գ. Գ.)։

1263ին, Հեթում թագաւորի խնդանով ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱԱՐԿԱՆԱԿ Ալարերէնէ Հայերէնի կը թարգմանէ Զիադարմանութիւն մը. (Խմբագիրը 33դ տուփ, թիւ 5):

1284ին, Միհիթար Հերացի թժշկապետը կը շաբաղը իւր «Զերմանց Միհ-